5939

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«31» 03 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0054-23

Ձեռնարկողը՝ **«Գասպարյան և որդիներ» ՓԲԸ**
Ք. Երևան, Դրոյի փողոց հ. 22

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դրոյի 22 և 22/10 հասցեներում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Ք. Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0054-23

«31» 03 **2023թ.**

«Գասպարյան և որդիներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դրոյի 22 և 22/10 հասցեներում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Գասպարյան և որդիներ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Ք. Երևան, Դրոյի փողոց հ. 22

Ներածական մաս. Բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Դրոյի փողոց հ. 22 և հ. 22/10 հասցեներում: Կառուցապատման հողամասը բաղկացած է երկու հողակտորից, ընդհանուր մակերեսը կազմում է 1.061305 հա: Հողամասերի բնութագրերը՝ Կադաստրային ծածկագիր՝ 01-012-0223-0192, մակերեսի չափը (հա)՝ 0.426338, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների: Կադաստրային ծածկագիր՝ 01-012-0223-0194, մակերեսի չափը (հա)՝ 0.634967, նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ արդյունաբերական օբյեկտների /Երևան համայնքի կողմից №01/18-07/2-4300-Ա նախագծման թույլտվություն /ճարտարապետահատագծային առաջադրանքի և երևանի քաղաքապետի 06,12,2022թ, թիվ 4300-Ա որոշման համաձայն հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխվում են համապատասխանաբար բնակավայրերի և բնակելի կառուցապատման/: Հողատարածքի հարևանությամբ գտնվում են Դրոյի և Ավետիսյան 4-րդ փողոցները՝ հասարակական և բազմաբնակարան բնակելի շենքեր: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար: Հողամասը ծանրաբեռնված է քանդման ենթակա 1-4 հարկանի շինություններով: Քանդման

(ապամոնտաժման) ենթակա շինությունների ընդհանուր մակերեսը կազմում է 3 556,18 քմ: Ըստ քանդման նախագծի քանդման աշխատանքները կիրականացվի 7 ամսում:
Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7)-րդ կետի ա) ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Նախագծվող տարածքը գտնվում է ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Դրոյի փողոց 22 եվ 22/10 հասցեներում: Նախագծման համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքապետի կողմից 12 /12/ 2022 թ. տրված № 01/18-07/2-4300-Ա ճարտարապետահատակագծային առաջադրանքը: Բնակելի համալիրը տեղակայվել է 10 613,05 քմ մակերեսով տեղանքի վրա Կադաստրային ծածկագրեր (01-012-0223-0192) ,(01-12-0223-0194): Սեփականության վկայականներ (№ 30112021-01-0186) եվ (№ 30112021-01-0224):
Նախագծվող բնակելի համալիրը բաղկացած է չորս մասնաշենքերից Ա,Բ,Գ,Դ: «Ա»-մասնաշենք քսաներկու հարկ , «Բ»-մասնաշենք քսաներկու հարկ, «Գ»-մասնաշենք տասնութ հարկ և «Դ»-մասնաշենք երեք հարկ: Համալիրը ունի ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղի՝ ավտոկայանատեղերի քանակը նախատեսված է 433 մեքենայի համար, որը համապատասխանում է ճարտարապետահատակագծային առաջադրանքի կետ 11-ի պահանջներին: Պոմպակայանը, հակահրդեհային ռեզերվուարները տեղակայված են ավտոկայանատեղիում: Ավտոկայանատեղին ապահովված է հրդեհամարման եվ հրդեհաշիջման համակարգով: «Ա» եվ «Բ» - մասնաշենքերը 22-հարկանի են, որից առաջին հարկը ամբողջովին հասարակական է, երկորդ և երորրդ հարկերը մասամբ հասակական են, բնակելի մասը բաղկացած է ամեն հարկում վեց բնակարաններից: Դրոյի փողոցի կողմից բոլոր հասարակական տարածքները ունեն բնակելիից առանձնացված մուտքեր: «Ա» և «Բ»-մասնաշենքերի հաջորդ 19 հարկերը ամբողջովին բնակելի են՝ ամեն հարկում 10 բնակարան: «Ա» եվ «Բ» մասնաշենքերի բնակարանների մակեսները տատանվում են 67,42 քմ-ից մինչև 124,59 քմ: Համալիրի «Գ» -մասնաշենքը վերգետնյա 18 հարկ է: Առաջին հարկը մասամբ հասարակական է, բնակելիից առանձնացված մուտքերով: Առաջին հարկում կա վեց բնակարան, հաջորդ 17 հարկերը ամբողջովին բնակելի են՝ ամեն հարկում 12 բնակարան: «Գ» մասնաշենքի բնականների մակեսները տատանվում են 44,96 քմ-ից մինչև 171,33 քմ: Բնակելի համալիրը նախատեսվում է ապահովել 614 բնակարաներով: «Դ» մասնաշենքը, որը գլխավոր ճակատատով դեպի դրոյի փողոցին զուգահեռ կողմնորոշումով, իրենից ներկայացնում է եռահարկ շինություն ամբողջովին հասարակական տարածքներով: Համալիրը կապահովվի կենտրոնացված ջեռուցումով, տաք և սառը ջրամատակարարումով: Տեղային հովացման համակարգով: Կաթսայատները տեղակայվելու են համապատասխանաբար «Ա»,«Բ» և «Գ» մասնաշենքերի տանիքներում: Բնակելի համալիրի տարածքը առաջարկվում է բարեկարգել եվ կանաչապատել, տարածքում կլինի մանկական խաղահրապարկ, հանգստի գոտի, տարեցների համար զրուցարան-տաղավարներով: Հողամասի ընդհանուր մակերես՝ 10613.05քմ, կառուցապատման տարածք՝ 3954.80քմ (37.26%), անջրանցիկ տարածք /ճանապարհներ, սալվածքներ և այլ/ ՝ 1438.30 քմ (13.55%), կանաչապատման տարածք՝ 5219.95քմ (49.49%), Ընդհանուր կառուցապատման մակերես՝ 107 234,29քմ, ստորգետնյա կառուցապատման մակերես՝ 23 331,51քմ, բնակելի տարածքների կառուցապատման մակերես՝ 77390,26քմ:
Նախագծման ընթացքում կառուցապատողը առաջնորդվել է ՀՀ կառավարության 12.04.2018թ. N426-Ն «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

էներգախնայողության եվ էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» որոշմամբ:

Ք Երևան, Քանաքեռ - Զեյթուն վարչական շրջան, Դրոյի փող 22 և 22/10 բնակելի համալիրի կառուցման աշխատանքային նախագծի ջրամատակարարման, ջրահեռացման, հեղեղատար կոյուղու և ոռոգման համակարգերի մասը մշակվել է համաձայն առաջադրանքի, ճարտարապետա-շինարարական գծագրերի, գործող շինարարական նորմերի և կանոնների: Կառուցապատող ընկերությունը դիմել է ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ ՓԲԸ-ին տեխնիկական պայմաններ ստանալու նպատակով: Ջրամատակարարում և Կոյուղի մասի նախագծում նախատեսվում են արտաքին հետևյալ համակարգերը՝ խմելու-տնտեսական, տնտ-կենցաղային կոյուղի, հեղեղատար կոյուղի, ոռոգման համակարգ: Նախագծային լուծումները ընդունված են համաձայն СНиП 2.04.01-85, սանտեխնիկական սարքերը մոնտաժվում են համաձայն СНиП 3.05.01-85: Բազմաֆունկցիոնալ համալիրի մասնաշենքերի բնակելի մասի խոհանոցներից, ս/հանգույցներից և լոգարաններից օդափոխությունը նախատեսված է բնական՝ հորանների միջով Մ160մմ և Մ125մմ օդատարերով բարձրանալով տանիքից վեր 1,0մ: Նախատեսված է տեղական արտածում գազօջախներից: Օդատարերի վրա յուրաքանչյուր հարկի առաստաղի տակ նախատեսված է կարգավորիչ ճաղավանդակ: Հասարակական հարկում և ավտոկայանատեղում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրված են հարկերի առաստաղների տակ: Կառուցապատող ընկերությունը դիմել է ՀԷՑ» ՓԲԸ-ին էլեկտրամատակարարման տեխնիկական պայմաններ ստանալու համար: Կառուցապատող ընկերությունը դիմել է «Գազպրամ Արմենիա» ՓԲԸ-ին գազամատակարարման տեխնիկական պայմաններ ստանալու համար:

Շինարարական աշխատանքների իրականացման տարածքում հողաբուսաշերտը բացակայում է: Տարածքում բնության և պատմամշակույթային հուշարձաններ չկան: Ծառաթփային բուսականությունը բացակայում է: Նախնական ուսումնասիրությունների և գրականության տվյալների նույնականացման արդյունքում բուն նախատեսվող գործունեության իրականացման տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանիներ չեն հայտնաբերվել: Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի «Բնակելի համալիր տարածքի բարեկարգման և արդիականացման նախագիծ», որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Բուսականության տեսակայնի և քանակային կազմը ներկայացված կանաչապատման սխեմայի վրա: Նախքան ծառատնկման աշխատանքների սկսելը անհրաժեշտ է կանաչապատվող տարածքում իրականացնել հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները՝ ոռոգման համակարգի անցկացում, համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում, ծառերի համար 1մ խորությամբ և 50սմ լայնության փոսերի պատրաստում, թփերի համար 50-60սմ խորությամբ և 40սմ լայնության փոսերի պատրաստում, բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում, պատրաստված 3 բաժին սևահողից, 1 բաժին կարմիր ավազից, 1 բաժին տորֆահողից և 0.5 բաժին փտած գոմաղբից: Ագրոտեխնիկական միջոցառումների ավարտից հետո խորհուրդ է տրվում նշված տարածքում ծառատունկն իրականացնել ուշ աշնանը կամ վաղ գարնանը: Տնկանյութը ծառերի դեպքում

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543103
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ * РА ЕРЕВАН * RA YEREVAN

պետք է լինի 1.52-2.0մ, թփերի դեպքում՝ 0,5-0,8մ: Տնկանյութը կարելի է ձեռք բերել անտառային և դեկորատիվ տնկարաններից: Որպեսզի պաշտպանիչ կանաչ գոտում խոտածածկ առաջանա անհրաժեշտ է 1 ք.մ.-ում նախատեսվում է ցանել 0,04 կգ խոտի սերմ: Ծառատնկման հաջորդ 3 տարիներին խորհուրդ է տրվում վեգետացիայի ընթացքում 2-3 անգամ իրականացնել խնամքի (քաղհան, փխրեցում) աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում նաև վնասատուների նկատմամբ թունաքիմիկատներով կամ կենսաբանական պայքարի միջոցառումներ: Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգմնա հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար: Կանաչապատ տարածքների ոռոգման ջուր կմատակարարվի հատուկ ավտոմեքենաներով, պայմանագրային հիմունքներով:

Երևան քաղաքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղեր: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ շինարարական աղբ, այդ թվում քանդման աշխատանքներից առաջացած աղբ /ծածկագիրը՝ 9120060001004/՝ 1400խմ, տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) /ծածկագիրը՝ 9120040001004/՝ 0.7 տ/տարի, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող (ծածկագիրը՝ 3140110008995)՝ 79400խմ: Շինարարական աղբը ամբողջությամ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Բազմահարկ բնակելի համալիրի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից: Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրույթներով: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 48 ամիս:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետական նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված: Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝ կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել, շինությունների ծածկում անթափանց թաղանփով, համապատսխան բարձրության, շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան, պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաորում: Շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով, իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը: Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները՝ ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար, տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին,

02543103
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ավտոցիստեռներով, պայմանագրային հիմունքներով: Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են՝ Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա, շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ: Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով: Աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինաղբից:

Տարածքում նախատեսվում է տնկել Կատալպա 2 հատ, Կաղնի ամառային 4 հատ, Թխկի սրատերև 18 հատ, Փռվող գիհի 2 հատ, Սյունաձև թույա 2 հատ, Ասպիրակ 15 հատ, Բարբարիս 12 հատ, Կիպրոս 1350 հատ (270գծմ), Թզուկ վարդեր 1380 հատ, Սիզամարգ 2561.5քմ: Կանաչապատ տարածքների ոռոգումը իրականացվելու է հարևանությամբ անցնող ոռոգման ցանցից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության ժամկետը սահմանված է շինարարության տրամադրումից հետո 3 տարի, նշված հարցը կհստակեցվի մոտ 2 տարի հետո: Ոռոգման ներքին ցանցը նախատեսվում է կաթիլային:Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝ շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում, պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝ խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը՝ աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում, պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը, շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին, բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: Բնակելի համալիրի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը՝ թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար, շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի:

02543103
ՓՈՐՁԱՐՏՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները՝

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում 1400 հազ. դրամ:

Պատճառաբանական մաս. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանն՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների այրումը խստիվ արգելվում է: Թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով

հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն, աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
- Առաջարկվում է հնարավորության դեպքում համալիրում /կառուցվող հասարակական շենքում/ նախատեսել նախակրթական հաստատության առկայություն՝ հաշվի առնելով վարչական շրջանում մեծ թափ ստացող կառուցապատման աշխատանքները և բնակչության թվի ավելացումը,
- Շինհրապարակի արտաքին տարածքը սահմանազատել ժամանակավոր ցանկապատով, անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,
- շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,
- ըստ անհրաժեշտության նախատեսել շրջանցիկ ճանապարհ՝ շինարարական աշխատանքների ժամանակահատվածում՝ երթևեկելի ճանապարհները չծանրաբեռնելու նպատակով,
- շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,
- բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Գասպարյան և որդիներ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դրոյի 22 և 22/10 հասցեներում նախատեսվող բնակելի համալիրի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Վարդան Հարությունյան